ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 368-Ա **09 հուլիսի 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԻՄԱՐԶԻ 100% ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <ժբ> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 և 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշումների պահանջները

Որոշում եմ՝

1. Հաստատել՝

1)Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների 2024 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2024 թ-ի տարեկան շահութաբաժինների վճարման չափի վերաբերյալ առաջարկությունները՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հանձնարարել՝

1) Հավելվածում ընդգրկված մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ շահութաբաժնի գումարը սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 2025 թվականի հոկտեմբերի 1-ը փոխանցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200440 հաշվին.

2) մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (պետ՝ Յու.Մուշեղյան) «Մարտունու ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների նախահաշվի վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշման քաղվածքը 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին:

09.07.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ք. Գավառ
2025թ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2025 թվականի հուլիսի 9 - ի
N 368-Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կառավարմանը վերապահված առևտրային կազմակերպությունների 2024թ. գործունեության արդյունքներով ՀՀ 2025թ. Պետական բյուջե տարեկան շահութաբաժիններ վճարելու առաջարկությունների մասին

(համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ)

Հ/Հ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի համակարգի կազմակերպության անվանումը	ՀՀ 2025թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Մարտունու ծննդատուն» ՓԲԸ	240.100
	ԸՆԴԱՄԵՆԸ	240.100

Ստորագրող՝
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098
2025-07-09 16:02:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ